



Արմենիա
Ինչուրանս

«ԱՐՄԵՆԻԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ»
ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
«ԱՐՄԵՆԻԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՍՊԸ խորհրդի
«07» փետրվարի 2025թ. թիվ 17 որոշմամբ

**ՄԱՔՍԱՅԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԻ (ԲՐՈՔԵՐԻ)
ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ
ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ**

ք"Երևան

**ՄԱՔՍԱՅԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԻ (ԲՐՈՔԵՐԻ) ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ
ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ**

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԲԱԺԻՆ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ	3
ԲԱԺԻՆ 2. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՕՔՅԵԿՏ	4
ԲԱԺԻՆ 3. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐՆԵՐ, ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՌԻՍԿԵՐ	4
ԲԱԺԻՆ 4. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՒՄԱՐ ԵՎ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԱՐԺԵՔ, ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐ, ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐ ԶՎՃԱՐԵԼՈՒ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐ	6
ԲԱԺԻՆ 5. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱ, ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՄԱՆ ԿԱՐԳ	7
ԲԱԺԻՆ 6. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏ, ԴՐԱ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԼՈՒԾՈՒՄ	8
ԲԱԺԻՆ 7. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ	10
ԲԱԺԻՆ 8. ՎՆԱՍԻ ԶԱՓԸ ՈՐՈՇԵԼՈՒ ԵՎ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳ	13
ԲԱԺԻՆ 9. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ ՄԱԺՈՐ)	17
ԲԱԺԻՆ 10. ՎՆԱՍԻ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՀԱՆՋԻ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԱՆՑՈՒՄ ԱՊԱՀՈՎԱԴՐԻՑ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԻՆ (ՍՈՒԲՐՈԳԱՑԻԱ)	17
ԲԱԺԻՆ 11. ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ	18
ԲԱԺԻՆ 12. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳ	19

ԲԱԺԻՆ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Սույն «Մաքսային ներկայացուցչի (բրոքերի) պատասխանատվության ապահովագրության կանոնները» (**այսուհետ՝ Կանոններ**) մշակված են Հայաստանի Հանրապետության օրենսդրության, մասնավորապես՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի, ՀՀ մաքսային օրենսգրքի, «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքի և այլ իրավական ակտերի համաձայն:

1.2. Մաքսային ներկայացուցչի (բրոքերի) պատասխանատվության ապահովագրությունը ներառվում է «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի ոչ կյանքի ապահովագրության տեսակի «Ընդհանուր պատասխանատվության ապահովագրություն» դասի մեջ:

1.3. Կանոնները հանդիսանում են Մաքսային ներկայացուցչի (բրոքերի) պատասխանատվության ապահովագրության պայմանագրի և/կամ վկայագրի (**այսուհետ՝ Պայմանագիր**) անբաժանելի մասը:

1.4. Կանոններում նշված պայմանները կարող են փոփոխվել (բացառվել կամ լրացվել) Կողմերի գրավոր համաձայնությամբ՝ Պայմանագրի կնքման ժամանակ կամ դրա գործողության ընթացքում, պայմանով, որ նման փոփոխությունները չեն հակասում Կանոններին, ՀՀ օրենսդրությանը և այլ իրավական ակտերին:

1.5. ՀՀ օրենսդրության համաձայն և Կանոնների հիման վրա «ԱՐՄԵՆԻԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ» Ապահովագրական ՍՊԸ-ն (**այսուհետ՝ Ապահովագրող**) ֆիզիկական և իրավաբանական անձանց (**այսուհետ՝ Ապահովադիր**) հետ կնքում է Պայմանագրեր:

1.6. Պայմանագրով Ապահովագրողը պարտավորվում է Պայմանագրում սահմանված վճարի (այսուհետ՝ ապահովագրավճար) դիմաց Պայմանագրով նախատեսված դեպքի (այսուհետ՝ Ապահովագրական պատահարի) ի հայտ գալու պարագայում փոխհատուցել Ապահովադիրին կամ երրորդ անձին ապահովագրական պատահարի հետևանքով պատճառված վնասը (ապահովագրական հատուցում) Պայմանագրում սահմանված գումարի (ապահովագրական գումար) շրջանակներում:

1.7. Կանոններով երրորդ անձ է համարվում ֆիզիկական կամ իրավաբանական անձը, որը մաքսային ձևակերպումներ և/կամ մաքսային հսկողություն իրականացնելու համար համապատասխան պայմանագիր է կնքել Ապահովադրի հետ և/կամ ՀՀ Մաքսային մարմինները:

1.8. Կանոններում կիրառվող անվանումներն ու հասկացությունները որոշ դեպքերում հատուկ պարզաբանվում են համապատասխան սահմանումներով: Եթե որևէ անվանման կամ հասկացության նշանակությունը պարզաբանված չէ Կանոններում և չի կարող պարզաբանվել օրենսդրական և ենթաօրենսդրական նորմատիվ ակտերով, ապա նման անվանումը կամ հասկացությունը պարզաբանվում է տառացի և բառացի նշանակությամբ:

1.9. Ապահովագրված գործունեություն է համարվում ՀՀ տարածքում Ապահովադրի և Ապրանքներ տեղափոխող անձի միջև կնքված պայմանագրի հիման վրա Մաքսային օրենսդրության համաձայն իրականացվող Ապահովադրի գործունեություն, ով մաքսային գործառնություններ իրականացնելու համար ունի մաքսային մարմնի կողմից տրամադրված գործող անհրաժեշտ թույլատվություն և Մաքսային օրենսդրությամբ նախատեսված որակավորման վկայականներ:

1.10. Մաքսային ներկայացուցիչը (բրոքերը) մաքսային ձևակերպումների և մաքսային հսկողության հետ կապված գործունեություն իրականացնող Հայաստանի Հանրապետության

**ՄԱՔՍԱՅԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԻ (ԲՐՈՔԵՐԻ) ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ
ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ**

անձն է, որը հանդես է գալիս իր և ապրանքներ տեղափոխող անձի միջև կնքված պայմանագրի հիման վրա:

1.10.1. մաքսային ձևակերպում է համարվում սույն օրենսգրքին և այլ իրավական ակտերին համապատասխան ապրանքների և տրանսպորտային միջոցների բացթողման համար սահմանված անհրաժեշտ միջոցառումների իրականացումը՝ մինչև որոշակի մաքսային ռեժիմով դրանց բացթողումը:

1.10.2. մաքսային հսկողություն է համարվում Հայաստանի Հանրապետության օրենքներով և այլ իրավական ակտերով, ինչպես նաև միջազգային պայմանագրերով ամրագրված դրույթների պահպանման նպատակով մաքսային մարմինների կողմից իրականացվող միջոցառումների համակարգը:

ԲԱԺԻՆ 2. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՕՐՅԵԿՏ

2.1. Կանոնների համաձայն ապահովագրության օբյեկտ են հանդիսանում ՀՀ օրենսդրությանը չհակասող Ապահովադրի գույքային շահերը, կապված Ապահովադրի կողմից մաքսային ձևակերպումներ և մաքսային հսկողության գործառնություններ իրականացնելու հետ, որոնք առաջանում են Ապահովադրի և ապրանքներ ներմուծող անձի միջև կնքված պայմանագրի հիման վրա:

2.2. Ապահովագրողի հատուցման վճարման պարտավորությունը ծագում է, եթե՝ պատճառված վնասը գտնվում է ուղղակի պատճառահետևանքային կապի մեջ Ապահովադրի՝ որպես Մաքսային ներկայացուցչի (բրոքերի) գործունեության հետ և այն հասցվել է Ապահովագրության տարածքում և Պայմանագրի գործողության ժամկետում:

ԲԱԺԻՆ 3. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐՆԵՐ, ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՌԻՍԿԵՐ

3.1. Կանոնների համաձայն ապահովագրական ռիսկ է հանդիսանում ենթադրվող իրադարձությունը, որի տեղի ունենալու դեպքի համար կնքվում է Պայմանագիրը:

3.2. Ապահովագրական պատահար է հանդիսանում տեղի ունեցած իրադարձությունը, որը նախատեսված է Պայմանագրով, որի տեղի ունենալու արդյունքում առաջանում է Ապահովագրողի՝ Ապահովադրին (երրորդ անձին) ապահովագրական հատուցում իրականացնելու պարտականությունը:

3.3. Կանոնների համաձայն ապահովագրական պատահար է համարվում Ապահովադրի՝ որպես մաքսային ներկայացուցչի (բրոքերի) գործունեություն իրականացման ընթացքում Ապահովադրի կողմից իր մասնագիտական ծառայությունների մատուցման ժամանակ մաքսային պարտավորությունների ոչ պատշաճ կատարման հետևանքով երրորդ անձին հասցված վնաս, այն է՝ առաջացած մաքսային վճարների, տույժերի և տուգանքների վճարման պարտավորությունը, որը հաստատվում է իրավասու պետական մարմնի կամ անկախ փորձագետի որոշմամբ, Ապահովադրի գործողությունների (անգործության) և Շահառուի (երրորդ անձի) մոտ վնասի առաջացման միջև առկա պատճառահետևանքային կապի առկայության պայմաններում, հետևյալի արդյունքում՝

3.3.1. Ապահովադրի կողմից Ապրանքներ տեղափոխող անձանց հետ կնքված պայմանագրերի հիման վրա իրականացվող և մաքսային օրենսդրությամբ սահմանված իրավական նորմերի (դիտավորությամբ կամ անգործությամբ) խախտում, հետևյալ ձևով՝

- ապրանքներ տեղափոխող անձին ոչ ժամանակին տեղեկացնելը այն միջոցների մասին, որոնք պետք է ձեռնարկվեին մաքսային գործառնությունների իրականացման համար,

**ՄԱՔՍԱՅԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԻ (ԲՐՈՔԵՐԻ) ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ
ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ**

- մաքսային հայտարարագրի կամ ապրանքի հետ առնչվող փաստաթղթերի և տեղեկությունների ներկայացման ժամկետների չպահպանելը,

- մաքսային փաստաթղթերի ձևակերպման ժամանակ թույլ տրված սխալները,

- մաքսային գործառնությունների իրականացման համար անհրաժեշտ առևտրային, փոխադրման և այլ փաստաթղթերի կորուստը կամ վնասումը:

- ապահովագրված գործունեության շրջանակներում մաքսային գործառնությունների կատարման ընթացքում Մաքսային օրենսդրությամբ սահմանված նորմատիվ իրավական ակտերի Ապահովագրի կողմից դիտավորյալ և անզգուշությամբ խախտումը կամ վերջինիս չհետևելը, ինչի հետևանք է հանդիսացել Ապահովագրին ներկայացված մաքսային մարմնի մաքսային վճարումներ կատարելու օրինական պահանջը:

3.4. Վնասներ համարվում են այն ծախսերը, որոնք անձը, ում իրավունքները խախտվել են մաքսային ներկայացուցչի (բրոքերի) գործունեության արդյունքում, կատարել է կամ պետք է կատարի իր խախտված իրավունքի վերականգնման համար:

3.5. Ապահովագրական պատահար չեն համարվում (և ըստ այդմ չեն հատուցվում) հետևյալ իրադարձությունները, որոնք հետևանք են՝

ա) ներկայացված անձի մաքսային վերահսկողության և մաքսային ձևակերպումների հետ կապված ուղղակի վնասների առաջացումը՝ մաքսային ներկայացուցչի (բրոքերի) և երրորդ անձի միջև կնքված պայմանագրի դադարեցումից հետո (անկախ այն բանից, թե ով է եղել դադարեցման նախաձեռնողը),

բ) մաքսային ներկայացուցչի (բրոքերի) կողմից կանխամտածված գործողություններ, դիտավորյալ, չարամիտ և քրեական գործողություններ, որոնք նաև հետևանք են պետական մարմինների անօրինական գործողությունների կամ անգործության,

գ) Պետական մարմինների կողմից **Ապահովագրի** նկատմամբ սահմանված պարտադիր վճարներ, տույժեր, տուգանքներ և պարտավորություններ,

դ) մաքսային ներկայացուցչի (բրոքերի) կողմից իր պայմանագրային պարտավորությունների խախտման պատճառով ներկայացված երրորդ անձանց մոտ անուղղակի վնասների առաջացումը (տույժեր և տուգանքներ նախատեսված տուժած երրորդ անձի և իր կոնտրագենտի միջև կնքված բեռների կամ ապրանքների մատակարարման պայմանագրով, բաց թողնված շահույթը և այլն)

ե) Մաքսային ներկայացուցչի (բրոքերի) կողմից իր պայմանագրային պարտավորությունների չկատարումը, որոնք առաջացել են հետևյալի արդյունքում՝

- միջուկային պայթյունի, ճառագայթման կամ ռադիոակտիվ վարակման ուղղակի կամ անուղղակի ազդեցություն,

- ռազմական գործողություններ, զորաշարժեր կամ այլ ռազմական միջոցառումներ,

- քաղաքացիական պատերազմ, ցանկացած տիպի ժողովրդական հուզումներ, գործադուլներ, ահաբեկչական գործողություններ,

- պետական մարմինների կարգադրությամբ իրականացված փաստաթղթերի և ապահովագրության օբյեկտի առգրավում, բռնագրավում, ռեկվիզիցիա, դրա վրա արգելանք դնելը, ոչնչացում կամ վնասում,

3.6. Ապահովագրական ծածկույթը չի տարածվում այն պատահարների վրա, որոնք առաջացել են հետևյալի արդյունքում՝

- Ապահովագրի կամ նրա ներկայացուցչի ակտիվ, թմրանյութերի կամ տոքսիկ նյութերի ազդեցության ներքո գտնվելու,

**ՄԱՔՍԱՅԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԶԻ (ԲՐՈՔԵՐԻ) ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ
ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ**

- Ապահովադրի աշխատակից հանդիսացող, սակայն Ապահովադրի կողմից չլիազորված մաքսային ձևակերպումների մասնագետի գործողությունների

- մաքսային ձևակերպումների մասնագետի գործողությունների արդյունքում, որի որակավորման վկայականի գործողության ժամկետը ապահովագրական պատահարի տեղի ունենալու պահին ավարտվել է կամ էլ այդ վկայականը չեղյալ է հայտարարվել կամ կասեցվել է,

- ապահովագրական օբյեկտի վերաբերյալ Ապահովադրի կողմից Ապահովագրողին միտումնավոր կեղծ տեղեկատվություն հայտնելու:

3.7. Ապահովագրողը պատասխանատվություն չի կրում՝

- մաքսային մարմինների կողմից մաքսային ներկայացուցչի (բրոքերի) նկատմամբ ներկայացված հայցերի համար, ինչը կապված չէ երրորդ անձանց հետ,

- մաքսային ներկայացուցչի (բրոքերի) կողմից երրորդ անձանց ուղղակի պատճառված վնասի հատուցման հայցերի համար, եթե այն տեղի է ունեցել Ապահովադրի՝ որպես մաքսային ներկայացուցիչ (բրոքեր) գործունեություն իրականացնելու վկայականի գործողության չեղարկման, հետկանչման կամ կասեցման ժամանակահատվածում,

- բարոյական վնասի փոխհատուցման մասին հայցերի համար:

**ԲԱԺԻՆ 4. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՒՄԱՐ ԵՎ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԱՐԺԵՔ,
ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐ, ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐ ԶՎՃԱՐԵԼՈՒ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐ**

4.1. Ապահովագրական գումարն Ապահովագրողի կողմից վճարման ենթակա հնարավոր ապահովագրական հատուցման առավելագույն չափն է:

4.2. Ապահովագրական գումարը սահմանվում է Ապահովադրի և Ապահովագրողի համաձայնությամբ և չի կարող պակաս լինել ՀՀ մաքսային օրենսգրքով սահմանված չափից:

4.3. Ապահովադրի և Ապահովագրողի համաձայնությամբ Պայմանագրով կարող է նախատեսված լինել ապահովագրական հատուցման առավելագույն չափ՝ մեկ ապահովագրական պատահարի, մեկ ապահովագրական ռիսկի, առանձին մաքսային գործողությունների, առանձին ապրանքատեսակների գծով մաքսային գործողությունների և այլնի համար:

4.4. Պայմանագրով դատական գործընթացի հետ կապված ծախսերի հատուցման համար կողմերի համաձայնությամբ կարող է սահմանվել առանձին ապահովագրական գումար կամ սահմանված ապահովագրական գումարից կարող է առանձնացվել մաս, որը նախատեսված կլինի այդ ծախսերը հատուցելու համար:

4.5. Ապահովագրական հատուցում իրականացնելուց հետո ապահովագրական գումարը ինքնաշխատ կերպով նվազեցվում է հատուցված գումարի չափով: Ապահովագրական գումարը համարվում է նվազեցված ապահովագրական հատուցում վճարելու մասին Ապահովագրողի եզրակացությունը համապատասխան ստորագրությամբ Ապահովադրին առձեռն հանձնելու կամ փոստով ուղարկելու պահից: Ապահովագրական հատուցման գումարը ստանալուց հետո Ապահովադրին իրավունք ունի լրացուցիչ ապահովագրավճարի դիմաց վերականգնել նախնական ապահովագրական գումարի չափը: Նախնական ապահովագրական գումարի չափը չվերականգնելու դեպքում Ապահովագրական պայմանագրի գործողության ընթացքում հաջորդ հատուցման ժամանակ հաշվի է առնվում նվազեցված ապահովագրական գումարը:

4.6. Ապահովագրավճարի մեծությունը հաշվարկվում է Ապահովագրողի կողմից սահմանված ապահովագրական սակագնի հիման վրա: Ապահովագրական սակագինը

**ՄԱՔՍԱՅԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԻ (ԲՐՈՔԵՐԻ) ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ
ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ**

որոշվում է Ապահովագրողի կողմից՝ ելնելով ապահովագրական գումարի չափից, Ապահովագրության ժամկետներից, ապահովագրական ռիսկերի Ապահովադրի կողմից ընտրված ծածկույթից, կարգավորիչ գործակիցներից, չհատուցվող գումարի մեծությունից և Ապահովագրության ընդունվող ռիսկի վրա ազդեցություն ունեցող այլ հանգամանքներից:

4.7. Մինչև մեկ տարի ժամկետով կնքվող Պայմանագրի համար Ապահովագրողի կողմից տվյալ ռիսկի համար սահմանված տարեկան ապահովագրական սակագնի նկատմամբ կարող են կիրառվել Ընկերության կողմից սահմանված կարգավորիչ գործակիցներ:

4.8. Ապահովագրավճարներն Ապահովադրի կողմից կարող են վճարվել միանվագ՝ ամբողջ Ապահովագրության ժամկետի համար կամ մաս-մաս: Վճարման կարգը սահմանվում է Ապահովագրության պայմանագրով:

4.9. Ապահովագրավճարներն Ապահովադրի կողմից կարող են վճարվել կանխիկ կերպով Ապահովագրողի դրամարկղ կամ ներկայացուցչին (այդ թվում ապահովագրական գործակալին), իսկ անկանխիկ հաշվարկների դեպքում՝ Ապահովագրողի կամ ապահովագրական գործակալի համապատասխան հաշվարկային հաշվին:

4.10. Ապահովագրավճարի վճարման կարգը և ձևը որոշվում են Ապահովագրողի և Ապահովադրի փոխադարձ համաձայնությամբ և սահմանվում են Պայմանագրով:

4.11. Ապահովագրավճարի (ապահովագրավճարի հերթական մասի) վճարման ամսաթիվ է համարվում Ապահովագրողի դրամարկղ կամ Ապահովագրողի իրավասու ներկայացուցչին ապահովագրավճարի (ապահովագրավճարի հերթական մասի) վճարման օրը կամ ապահովագրավճարի (ապահովագրավճարի հերթական մասի) վճարման՝ Ապահովագրողի հաշվարկային հաշվին մուտք լինելու օրը:

4.12. Եթե Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 14-օրյա ժամկետում Ապահովադիրը չի վճարում միանվագ կամ առաջին հերթական ապահովագրավճարը, ապա ապահովագրողն իրավունք ունի միակողմանի լուծելու Պայմանագիրը, եթե Պայմանագրով նախատեսված չէ այլ ժամկետ կամ ապահովագրավճարի մուծման տարաժամկետման հնարավորություն:

4.13. Եթե Ապահովադիրը Պայմանագրով սահմանված կարգով և ժամկետում չի վճարել հերթական ապահովագրավճարը, ապա Ապահովագրողն իրավունք ունի ապահովագրավճարի վճարման համար սահմանված ժամկետից երեք օր (լրացուցիչ ժամկետ) հետո միակողմանի լուծելու Ապահովագրության պայմանագիրը՝ առանց այդ մասին Ապահովադրին ծանուցելու:

**ԲԱԺԻՆ 5. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱ,
ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՄԱՆ ԿԱՐԳ**

5.1. Պայմանագիրը կնքվում է գրավոր ձևով Ապահովադրի կողմից Ապահովագրողի սահմանված ձևի գրավոր դիմում-հարցաթերթիկի հիման վրա (բացառությամբ Կանոնների 5.2 կետում նշված դեպքի), որում պետք է պարունակվեն ապահովագրության օբյեկտի վերաբերյալ պահանջվող տեղեկությունները:

5.2. Պայմանագիրն անհրաժեշտության դեպքում կարող է կնքվել Ապահովադրի բանավոր դիմումի հիման վրա, պայմանով, որ Պայմանագրում ընդգրկվեն ապահովագրության օբյեկտի վերաբերյալ Ապահովագրողի կողմից պահանջվող տեղեկությունները:

**ՄԱՔՍԱՅԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԻ (ԲՐՈՔԵՐԻ) ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ
ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ**

5.3. Պայմանագիր կնքելիս Ապահովադիրը պետք է Ապահովագրողին հայտնի իրեն հայտնի բոլոր այն հանգամանքների մասին, որոնք էական նշանակություն ունեն ռիսկի գնահատման համար:

5.4. Պայմանագրի կնքման համար դիմում-հարցաթերթիկի հետ միասին Ապահովադիրը Ապահովագրողի պահանջով պետք է ներկայացնի հետևյալ փաստաթղթերը (կամ դրանց պատճենները) և տեղեկությունները՝

- Կազմակերպության անվանում կամ ֆիզիկական անձ մաքսային ներկայացուցչի (բրոքերի) անուն/ազգանուն

- Գրանցման և գործունեության հասցեներ

- Հեռախոս, էլեկտրոնային հասցե

- Առկա որակավորման վկայական

- ՀՎՀՀ

- Պետական գրանցման վկայական

- Ղեկավարի պաշտոնի անվանում և անուն/ազգանուն:

5.5. Կանոնների հիման վրա կնքված Պայմանագրի համաձայն Ապահովագրողը պարտավորվում է Պայմանագրով սահմանված վճարի (ապահովագրավճարի) դիմաց, Պայմանագրում նախատեսված ապահովագրական պատահար տեղի ունենալու դեպքում Ապահովադիրին (Շահառուին) վճարել ապահովագրական հատուցում՝ Պայմանագրով սահմանված ապահովագրական գումարի սահմաններում:

5.6. Պայմանագիրը կնքելիս Ապահովադիրի և Ապահովագրողի համաձայնությամբ կարող է սահմանվել չհատուցվող գումար՝ վնասի չափ, որի հատուցման պարտավորությունը կրում է Ապահովադիրը: Չհատուցվող գումարը կարող է լինել պայմանական կամ ոչ պայմանական և սահմանվել ապահովագրական գումարի նկատմամբ ինչպես տոկոսներով, այնպես էլ բացարձակ արժեքով՝

5.6.1. ոչ պայմանական (նվազեցվող) չհատուցվող գումար սահմանելու դեպքում փոխհատուցվող վնասը բոլոր դեպքերում նվազեցվում է չհատուցվող գումարի չափը յուրաքանչյուր ապահովագրական պատահարի դեպքում,

5.6.2. պայմանական (չնվազեցվող) չհատուցվող գումար սահմանելու դեպքում Ապահովագրողը պատասխանատվություն չի կրում չհատուցվող գումարի չափը չգերազանցող վնասի հատուցման համար, սակայն հատուցում է վնասն ամբողջությամբ, եթե այն գերազանցում է չհատուցվող գումարի չափը:

5.7. Պայմանագիրը կնքելիս Ապահովադիրը և Ապահովագրողը կարող են համաձայնության գալ՝ լրացուցիչ պայմանների և դրույթների ներառման, որոշակի ռիսկերի բացառման վերաբերյալ, ինչի մասին Պայմանագրում կատարվում է համապատասխան նշագրում:

**ԲԱԺԻՆ 6. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏ, ԴՐԱ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ
ԼՈՒԾՈՒՄ**

6.1. Պայմանագիրը կնքվում է Ապահովագրողի և Ապահովադիրի (այսուհետ՝ Կողմեր) համաձայնությամբ ցանկացած ժամկետով:

6.2. Պայմանագրի գործողության ժամկետի սկիզբը և ավարտը նշվում են Պայմանագրում: Պայմանագրի ժամկետի սկիզբը չի կարող լինել Պայմանագրի կնքման ժամկետից շուտ:

**ՄԱՔՍԱՅԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԻ (ԲՐՈՔԵՐԻ) ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ
ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ**

6.3. Պայմանագրի գործողությունը դադարում է՝

ա) Պայմանագրում նշված ժամկետի լրանալուց հետո.

բ) Ապահովագրողի կողմից Կանոնների և դրանց հիման վրա կնքված Պայմանագրով ստանձնած իր պարտավորությունները ամբողջ ծավալով կատարելուց հետո,

գ) կողմերի համաձայնությամբ.

դ) մաքսային ներկայացուցչի (բրոքերի) գործունեություն իրականացնելու վկայականի ետ կանչման դեպքում: Այդ դեպքում մաքսային ներկայացուցչին (բրոքերը) պարտավոր է անհապաղ տեղեկացնել Ապահովագրողին և դիմել Պայմանագիրը դադարեցնելու համար:

ե) օրենքով, այլ իրավական ակտերով, Կանոններով և Պայմանագրով նախատեսված այլ դեպքերում:

զ) Պայմանագրով Ապահովագրի (Շահառուի) նկատմամբ Ապահովագրողի կողմից պարտավորությունների լրիվ ծավալով կատարման,

է) Պայմանագրում սահմանված ժամկետներում և չափով Ապահովագրի կողմից ապահովագրավճարը չվճարելու (ապահովագրավճարի հերթական մասի վճարումը չկատարելու) դեպքում,

ը) եթե դրա ուժի մեջ մտնելուց հետո վերացել է ապահովագրական պատահարի վրա հասնելու հնարավորությունը, և ապահովագրական ռիսկի գոյությունը դադարել է ապահովագրական պատահարից տարբեր հանգամանքների բերումով,

թ) մինչև նախորդ Պայմանագրի գործողության ժամկետի ավարտը նոր ժամկետով Պայմանագիր կնքելու դեպքում, նոր (վերակնքված) Պայմանագիրն ուժի մեջ է մտնում նախորդ Պայմանագրի գործողության ժամկետի ավարտի պահից:

6.4. Ապահովագիրն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու Պայմանագիրը՝ այդ մասին ոչ պակաս քան 15 օր առաջ ծանուցելով Ապահովագրողին:

6.4.1. Ապահովագրի պահանջով Պայմանագրի վաղաժամկետ լուծման դեպքում Ապահովագրողն Ապահովագրին է վերադարձնում ապահովագրավճարներն՝ Պայմանագրի չլրացած ժամկետին համամասնորեն, ինչպես նաև Ապահովագրից գանձվում է տուգանք Պայմանագրի չգործած օրերի համար հաշվարկված Պայմանագրով սահմանված ապահովագրավճարի 20%-ի չափով՝ հետևյալ բանաձևով՝

$$\frac{\text{Պայմանագրով սահմանված ապահովագրավճար} \times 20\%}{\text{Պայմանագրի գործողության օրեր}} \times \text{Պայմանագրի չլրացած օրեր}$$

եթե Պայմանագրով այլ բան նախատեսված չէ: Եթե Ապահովագրի պահանջները պայմանավորված են Ապահովագրողի կողմից Ապահովագրության պայմանների և Կանոնների խախտմամբ, ապա Ապահովագրողն Ապահովագրին է վերադարձնում ապահովագրավճարներն՝ Պայմանագրի չլրացած ժամկետին համամասնորեն:

6.4.2. Ապահովագրողի պահանջով Պայմանագրի վաղաժամկետ լուծման դեպքում Ապահովագրին են վերադարձվում ապահովագրավճարներն՝ Պայմանագրի չլրացած ժամկետին համամասնորեն, իսկ եթե Ապահովագրողի պահանջները պայմանավորված են Ապահովագրի կողմից Պայմանագրի և Կանոնների խախտմամբ, ապա վերջինս Ապահովագրին է վերադարձնում ապահովագրավճարներն՝ Պայմանագրի չլրացած ժամկետին համամասնորեն, ինչպես նաև Ապահովագրից գանձվում է տուգանք Պայմանագրի չգործած օրերի համար հաշվարկված Պայմանագրով սահմանված ապահովագրավճարի 20%-ի չափով՝ հետևյալ բանաձևով՝

$$\frac{\text{Պայմանագրով սահմանված ապահովագրավճար} \times 20\%}{\text{Պայմանագրի գործողության օրեր}} \times \text{Պայմանագրի չլրացած օրեր}$$

**ՄԱՔՍԱՅԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԻ (ԲՐՈՔԵՐԻ) ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ
ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ**

6.5. Պայմանագրի վաղաժամկետ լուծման դեպքում Ապահովադիրին չեն վերադարձվում ապահովագրավճարները, եթե Ապահովադիրը տվյալ Պայմանագրի գծով դիմել է ապահովագրական հատուցում ստանալու համար և ապահովագրական հատուցման հայցը Ապահովագրողի կողմից դեռևս չի կարգավորվել կամ ստացել է տվյալ Պայմանագրով սահմանված ապահովագրավճարի կեսից ավելի չափով ապահովագրական հատուցում:

6.6. Ապահովադրի և Ապահովագրողի փոխադարձ համաձայնությամբ կարող են սահմանվել դադարեցման գծով վերադարձվող ապահովագրավճարի հաշվարկի այլ սկզբունքներ:

ԲԱԺԻՆ 7. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

7.1. Ապահովագրողը պարտավոր է.

7.1.1. Պայմանագիր կնքելիս Ապահովադիրին ծանոթացնել Կանոններին, բացատրել Պայմանագիր կնքելու կարգը, Ապահովադիրին տրամադրել Կանոնները, Պայմանագիրը,

7.1.2. հայտի կարգավորման համար անհրաժեշտ բոլոր փաստաթղթերն ստանալուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում ընդունել որոշում՝ ապահովագրական պատահարի նշաններ ունեցող իրադարձությունն ապահովագրական պատահար ճանաչելու կամ չճանաչելու վերաբերյալ, ինչպես նաև ապահովագրական հատուցում իրականացնելու կամ ապահովագրական հատուցումը մերժելու մասին,

7.1.3. ապահովագրական պատահարի նշաններ ունեցող իրադարձությունն ապահովագրական պատահար ճանաչելու վերաբերյալ որոշում ընդունելու դեպքում, համապատասխան որոշումն ընդունելու օրվանից 15 աշխատանքային օրվա ընթացքում իրականացնել ապահովագրական հատուցում, իսկ հատուցումը մերժելու դեպքում՝ կայացված պատճառաբանված որոշումը պատվիրված նամակով 5 (հինգ) օրացուցային օրվա ընթացքում առաքել Ապահովադիրին (երրորդ անձի)՝ նրա մշտական բնակության վայրի կամ գտնվելու վայրի հասցեով,

7.1.4. չիրապարակել Ապահովադրի, Ապահովագրված անձի, երրորդ անձի, նրանց գույքային կարգավիճակի մասին տեղեկություններ՝ բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերի:

7.2. Ապահովագրողն իրավունք ունի.

7.2.1. ստուգելու Ապահովադրի կողմից հայտնած տվյալների համապատասխանությունը,

7.2.2. պահանջելու Պայմանագրի պայմանների փոփոխում և/կամ լրացուցիչ ապահովագրավճարի վճարում կնքված Պայմանագրի պայմանները փոփոխող հանգամանքների և այնպիսի գործոնների առկայության դեպքում, որոնք կարող են էապես ազդել ապահովագրության ռիսկի մեծացման վրա: Փոփոխում կատարելու Ապահովագրողի մտադրության, ինչպես նաև Ապահովադրի՝ փոփոխության հետ համաձայն չլինելու դեպքում Պայմանագիրն անմիջապես լուծելու Ապահովադրի իրավունքի մասին Ապահովագրողը պարտավոր է նախապես ծանուցել նրան: Եթե Ապահովադիրը (երրորդ անձը) առարկում է Պայմանագրի պայմանների փոփոխությունը և/կամ լրացուցիչ ապահովագրավճարի վճարումը, Ապահովագրողն իրավունք ունի պահանջելու լուծել Պայմանագիրը և հատուցելու Պայմանագրի լուծմամբ իրեն պատճառված վնասները,

7.2.3. գրավոր պահանջ ներկայացնելու Ապահովադիրին ապահովագրական պատահարի տեղի ունենալու և դրա արդյունքում հնարավոր վնասի չափը որոշելու համար

**ՄԱՔՍԱՅԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԶԻ (ԲՐՈՔԵՐԻ) ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ
ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ**

Էական նշանակություն ունեցող հանգամանքների երևան գալու՝ իրեն հայտնի հավանականության մասին գրավոր տեղեկություններ հայտնելու վերաբերյալ,

7.2.4. պահանջելու, որ Պայմանագիրը ճանաչվի անվավեր, եթե Պայմանագիրը կնքելուց հետո պարզվի, որ Ապահովադիրն Ապահովագրողին հայտնել է նախապես հայտնի սուտ տեղեկություններ ապահովագրական պատահարի տեղի ունենալու և դրա արդյունքում հնարավոր վնասի չափը որոշելու համար էական նշանակություն ունեցող հանգամանքների երևան գալու՝ իրեն հայտնի հավանականության մասին,

7.2.5. տալ Ապահովադրի (երրորդ անձի) համար պարտադիր ցուցումներ և ձեռնարկել այնպիսի միջոցներ, որոնք անհրաժեշտ են վնասի չափը նվազեցնելու, իրադարձության հանգամանքները, պատճառները, հնարավոր մեղավոր անձանց որոշելու համար,

7.2.6. ապահովագրական հատուցման չափը որոշելիս հաշվանցել Պայմանագրի գծով կետանցված ապահովագրավճարի հերթական մասի գումարը,

7.2.7. հետաձգել ապահովագրական պատահարի նշաններ ունեցող իրադարձությունը որպես ապահովագրական պատահար ճանաչելու կամ չճանաչելու մասին որոշման կայացումը, եթե ապահովագրության օբյեկտի ոչնչացման, վնասման կամ կորստի կամ այլ անձանց կյանքին, առողջությանը և/կամ գույքին վնաս պատճառելու հարցով հարուցվել է քրեական գործ՝ մինչև ապահովագրական պատահարի հանգամանքների և/կամ պատճառի և/կամ վնասի չափի վերաբերյալ տեղեկություններ պարունակող փաստաթղթի ստացումը,

7.2.8. ապահովագրական հատուցման վերաբերյալ որոշում ընդունելու համար անցկացնել ինքնուրույն ստուգումներ՝ սեփական հայեցողությամբ ներգրավելով մասնագետների,

7.2.9. իրականացնել այլ գործողություններ Պայմանագրի գծով իր պարտականությունները կատարելու նպատակով,

7.2.10. իրականացնել Պայմանագիրը կնքելիս Ապահովադրի կողմից հայտնած անհատական տվյալների (անհատական տվյալների մասին օրենսդրության համաձայն) մշակում (ներառյալ դրանց տարածումը, օգտագործումը, պահպանումը, ինչպես նաև երրորդ անձանց տրամադրումը) ապահովագրական գործունեություն իրականացնելու, ապահովագրական պրոդուկտների կամ գործընկերների պրոդուկտների մասին տեղեկություններ տրամադրելու նպատակով, այդ թվում՝ կապի միջոցների օգտագործմամբ Ապահովադրի հետ ուղղակի կապ հաստատելու միջոցով, օրենսդրությամբ չարգելված այլ նպատակներով, եթե Պայմանագրով այլ բան նախատեսված չէ,

7.2.11. չի վճարում ապահովագրական հատուցում, եթե Ապահովադիրը իրեն չի տեղեկացրել ապահովագրական պատահարի նշաններ ունեցող իրադարձության մասին՝ Ապահովադրին (Շահառուին) այդ իրադարձության մասին հայտնի դառնալու պահից 24 ժամվա ընթացքում

7.2.12. իրականացնել Ապահովադրի (Շահառուի) անձնական տվյալների մշակում՝ Ապահովագրական պայմանագրի կնքման, կատարման, ուղարկման, պայմանագրի բխող իր իրավունքների իրականացման նպատակներով:

7.3. Ապահովադիրը պարտավոր է.

7.3.1. վճարել ապահովագրավճարը (ապահովագրավճարի հերթական մասը) Պայմանագրում սահմանված չափով և ժամկետներում,

7.3.2. Պայմանագիրը կնքելիս գրավոր տեղեկություններ հայտնել ապահովագրական պատահարի տեղի ունենալու և դրա արդյունքում հնարավոր վնասի չափը որոշելու համար էական նշանակություն ունեցող հանգամանքների երևան գալու՝ իրեն հայտնի

**ՄԱՔՍԱՅԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԻ (ԲՐՈՔԵՐԻ) ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ
ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ**

հավանականության մասին, ինչպես նաև տվյալ ապահովագրության օբյեկտի գծով կնքված և կնքվող բոլոր ապահովագրության պայմանագրերի մասին,

7.3.3. Պայմանագրի գործողության ժամկետի ընթացքում անհապաղ, սակայն ամեն դեպքում ոչ ուշ քան Ապահովագրին այդ մասին հայտնի դառնալու պահից 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում Ապահովագրողին գրավոր տեղեկացնել Պայմանագիրը կնքելիս Ապահովագրողին հայտնած հանգամանքների՝ իրեն հայտնի դարձած փոփոխությունների մասին, եթե այդ փոփոխությունները կարող են էապես ազդել ապահովագրական ռիսկի մեծանալու կամ նվազելու վրա (բացառությամբ 1.4 կետում նշված դեպքի),

7.3.4. Ապահովագրողի հետ համաձայնեցված ժամկետի ընթացքում վերացնել ապահովագրական ռիսկի աստիճանը էապես բարձրացնող հանգամանքները, որոնց վերացման անհրաժեշտության մասին Ապահովագրողը գրավոր հայտնել է Ապահովագրին,

7.3.5. Ապահովագրողի ներկայացուցչի հետ համաձայնեցնելով՝ ապահովագրական պատահարի նշաններ ունեցող իրադարձության հանգամանքների, պատճառների, պատճառված վնասի չափի մասին տեղեկություններ ստանալու նպատակով դիմել համապատասխան կազմակերպություններին,

7.3.6. տեղի ունեցած պատահարի մասին տեղեկանալուց հետո անհապաղ, ցանկացած մատչելի և տեղեկացման փաստը հավաստող եղանակով տեղեկացնել Ապահովագրողին Պայմանագրում նշված հեռախոսահամարներով, իսկ բոլոր դեպքերում պատահարը տեղի ունենալուց հետո ոչ ուշ, քան 48 ժամվա ընթացքում, չհաշված ոչ աշխատանքային օրերը, այդ մասին գրավոր հայտնել Ապահովագրողին:

7.3.7. հնարավորության դեպքում, վնաս պատճառելու համար պատասխանատու անձանց ներկայացնել պատշաճ կերպով ձևակերպված պահանջ և Ապահովագրողին փոխանցել մեղավոր անձանց նկատմամբ պահանջի իրավունքն իրականացնելու համար բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը,

7.3.8. ներկայացնել փաստաթղթեր, որոնք տրվել են համապատասխան մարմինների կողմից և հաստատում են հայտնած իրադարձության տեղի ունենալու փաստը և հանգամանքները

7.3.9. առանց Ապահովագրողի համաձայնության երրորդ անձին չվճարել կամ չտալ վնասի հատուցման վերաբերյալ ոչ մի ուղղակի կամ անուղղակի պարտավորության իրականացման երաշխիքներ:

7.4. Ապահովագրին իրավունք ունի.

7.4.1. Պայմանագրով և Կանոններով նախատեսված դեպքերում ստանալ ապահովագրական հատուցում,

7.4.2. ներկայացնել դիմում ապահովագրության պայմանների փոփոխման, լրացուցիչ ապահովագրության և/կամ ապահովագրական գումարի մեծացման վերաբերյալ,

7.4.3. Պայմանագրի գործողության ժամկետի ընթացքում այն կորցնելու դեպքում գրավոր դիմում ներկայացնելուց հետո Ապահովագրողից ստանալ կրկնօրինակը: Կրկնօրինակը տրամադրելուց հետո կորցրած Պայմանագիրը համարվում է անվավեր,

7.4.4. վաղաժամկետ դադարեցնել Պայմանագիրը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով,

7.4.5. ապահովագրական հատուցման մերժում ստանալու դեպքում Ապահովագրողից ստանալ նման որոշման պատճառաբանված հիմնավորումը:

**ՄԱՔՍԱՅԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԶԻ (ԲՐՈՔԵՐԻ) ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ
ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ**

7.5. Շահառուներն իրավունք ունեն ստանալ ապահովագրական հատուցում և կատարել Ապահովադրի պարտականությունները Պայմանագրի գծով:

7.6. Կանոնների հիման վրա Ապահովագրողի հետ Պայմանագիր կնքած Ապահովադիրը հաստատում է իր համաձայնությունը՝ կապված Ապահովագրողի կողմից ստորև թվարկված Ապահովադրի անհատական տվյալների մշակման հետ՝ Պայմանագրի գծով ապահովագրություն իրականացնելու համար, այդ թվում՝ պայմանագրի գծով ապահովագրական ծառայությունների տրամադրման, վնասների կարգավորման, պայմանագրի վարման որակը ստուգելու նպատակով, ինչպես նաև Ապահովադիրին՝ Ապահովագրողի այլ պրոդուկտների և ծառայությունների վերաբերյալ տեղեկացնելու նպատակով:

Ապահովադրի անհատական տվյալները ներառում են. անունը, ազգանունը, հայրանունը, ծննդյան տարեթիվը, ամիսը, ամսաթիվը և վայրը, անձնագրային տվյալները, բնակության հասցեն, Ապահովագրողի հետ կնքած Պայմանագրում նշված այլ տեղեկություններ (ներառյալ դրա անբաժանելի մասերը՝ ապահովագրության դիմում, հավելվածներ և այլն), որոնք ՀՀ օրենսդրության համաձայն կարող են դասվել անհատական տվյալներին:

Ապահովագրության Կանոնների կետի վերը նշված դրույթները վերաբերում են նաև Շահառուին/Ապահովագրված անձին՝ նրանց կողմից անհատական տվյալների մշակման համար Ապահովագրողին գրավոր համաձայնություն տալու դեպքում:

**ԲԱԺԻՆ 8. ՎՆԱՍԻ ԶԱՓԸ ՈՐՈՇԵԼՈՒ ԵՎ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՈՒՄ
ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳ**

8.1. Ապահովագրական հատուցումն իրականացվում է Ապահովագրողի կողմից օրենքին, այլ իրավական ակտերին, Կանոններին և Պայմանագրին համապատասխան՝ հիմք ընդունելով Ապահովադրի (Շահառուի) հայտարարությունը՝ դիմումը, ինչպես նաև վնասի պատճառը և (կամ) չափը հավաստող՝ համապատասխան լիազորված մարմնի (մարմինների) կողմից հաստատված փաստաթուղթը (փաստաթղթերը):

8.2. Ապահովադիրն ապահովագրական հատուցում ստանալու նպատակով պետք է լրացնի սահմանված ձևի գրավոր դիմում (դիմում հայտարարագիր):

8.3. Ապահովագրական հատուցում ստանալու համար Ապահովադիրն Ապահովագրողին է ներկայացնում նաև Պայմանագրի իր օրինակը, թույլ տրված մասնագիտական սխալի հետ կապված նյութերի պատճենները, պահանջների, ապահովագրական պատահար տեղի ունենալու հետ կապված վճարման ենթակա գումարների նշմամբ հայցային դիմումների, դատական որոշումների պատճենները և Ապահովագրողի պահանջով այլ փաստաթղթեր:

8.4. Ապահովագրողն իրավունք ունի ապահովագրական պատահարի հետ կապված լրացուցիչ տվյալներ հավաքագրել իրավապահ մարմիններից, պետական կառավարման մարմիններից կամ այլ անձանցից, որոնք տիրապետում են պատահարի առաջացման հանգամանքների մասին տեղեկատվության:

8.5. Ապահովագրողը պատահարի առաջացումից հետո իրավունք ունի անձամբ հետաքննելու և պարզելու կամ դիմելու անկախ փորձագետների՝ ապահովագրական պատահարի պատճառները բացահայտելու և վնասի չափը ճշտելու համար, ինչպես նաև ապահովագրական հատուցման չափը որոշելիս հիմնվելու վերջիններիս եզրակացությունների վրա:

**ՄԱՔՍԱՅԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԻ (ԲՐՈՔԵՐԻ) ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ
ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ**

8.6. Ապահովագրական պատահարի առկայության և Ապահովադրի կողմից պատճառված վնասի հատուցման պարտականության, ինչպես նաև ապահովագրական պատահարի, առաջացած վնասի և պատճառված վնասի չափերի միջև պատճառահետևանքային կապի առնչությամբ վեճի բացակայության պարագայում հատուցման պահանջը բավարարվում և ապահովագրական հատուցումը վճարվում է արտադատական կարգով:

Այդ դեպքում Ապահովագրողի կողմից վնասի և ապահովագրական հատուցման գումարի չափի մասին որոշումը կայացվում է իրավասու մարմինների (պետական վերահսկողության մարմինների, հատուկ ստեղծված հանձնաժողովների և այլն) փաստաթղթերի հիման վրա, ինչպես նաև հաշվի առնելով կատարված ծախսերը հավաստող տեղեկանքները, հաշիվները և այլ փաստաթղթերը:

8.7. Կանոնների 8.6 կետում թվարկված հանգամանքների վերաբերյալ վեճի առկայության պարագայում ապահովագրական հատուցման վճարումը կատարվում է դատարանի օրինական ուժի մեջ մտած որոշման հիման վրա:

8.8. Ապահովագրական հատուցման գումարի մեջ ներառվում է՝

8.8.1. Մաքսային ներկայացուցչի (բրոքերի) գործունեություն իրականացնելիս անփութության, սխալի կամ բացթողման հետևանքով Ապահովադրի հաճախորդներին հասցված իրական գույքային վնասը, այն է՝

- երրորդ անձի կողմից ավել վճարված մաքսատուրքի և իրական մաքսատուրքի մեծության տարբերությունը

- վճարված տույժերը և տուգանքները, որոնք սխալ մաքսային ձևակերպումների հետևանքով նշանակվել են մաքսային մարմինների կողմից

- հայտարարագրման ժամկետների խախտման հետևանքով կրկնակի մաքսային վճարների հետ կապված լրացուցիչ ծախսերը,

- երրորդ անձից ստացված առևտրային գաղտնիք կազմող տեղեկատվության հրապարակման արդյունքում երրորդ անձին հասցված ուղղակի վնասի հատուցումը (միայն դատարանի որոշման հիման վրա)

8.9. Ապահովագրական հատուցման վճարումն իրականացվում է Պայմանագրով սահմանված ապահովագրական գումարի և պատասխանատվության ենթասահմանաչափերի սահմաններում:

8.10. Ապահովագրողն իրավունք ունի մերժելու ապահովագրական հատուցման վճարումը, եթե Ապահովադիրը՝

- ապահովագրական ռիսկի գնահատման համար էական նշանակություն ունեցող հանգամանքների մասին նախապես հայտնել է կեղծ տեղեկություններ,

- Ապահովագրողին չի տեղեկացրել ռիսկի էական փոփոխությունների մասին: Հակառակ դեպքում Ապահովագրողն իրավունք ունի Ապահովադրից պահանջելու Պայմանագրի դադարեցում և դադարեցման հետ կապված վնասների հատուցում,

- Միտումնավոր չի ձեռնարկել խելամիտ և մատչելի միջոցներ հնարավոր վնասների նվազեցմանն ուղղված:

- Կանոններով սահմանված ժամկետներում Ապահովագրողին չի տեղեկացրել տեղի ունեցած պատահար մասին,

- Պայմանագրով սահմանված այլ դեպքերում:

**ՄԱՔՍԱՅԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԻ (ԲՐՈՔԵՐԻ) ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ
ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ**

8.11. Եթե Ապահովադիրը ստացել վնասի հատուցում այլ անձանցից, ապա Ապահովագրողը վճարում է միայն վճարման ենթակա գումարի և այլ անձանցից ստացված գումարի տարբերության չափով:

8.12. Ապահովագրական պատահար տեղի ունենալու դեպքում, Ապահովագրողն Ապահովադիրին հատուցում է հետևյալ լրացուցիչ ծախսերը՝

ա) Ապահովագրողի կողմից հատուցման ենթակա վնասների նվազեցման նպատակով Ապահովադիրի կողմից կատարած ծախսերը, եթե այդպիսի ծախսերը անհրաժեշտ են եղել կամ կատարվել են Ապահովագրողի ցուցումների համաձայն,

բ) ապահովագրական պատահարի գործը դատական մարմիններում վարելու համար Ապահովադիրի կատարած ծախսերը, եթե դրանք կատարվել են Ապահովագրողի գրավոր ցուցումներին համաձայն կամ նրա գրավոր համաձայնությամբ,

գ) Ապահովագրական պատահարի հետ կապված պատճառների և հանգամանքների պարզաբանման նպատակով Ապահովադիրի կողմից կատարված անհրաժեշտ և նպատակահարմար ծախսերը, եթե դրանք կատարվել են Ապահովագրողի գրավոր համաձայնությամբ:

8.13. Եթե երրորդ անձին պատճառված վնասը ենթակա է հատուցման ոչ միայն Ապահովադիրի կողմից, այլ նաև վնասի պատճառման համար պատասխանատու այլ անձանց կողմից, ապա Ապահովագրողը հատուցում է Պայմանագրով սահմանված ապահովագրական գումարի սահմաններում պատճառված վնասի և այն գումարի տարբերության չափը, որը պատճառված վնասի համար պատասխանատու անձանցից ենթակա է առգրավման (գանձման):

8.14. Ապահովադիրը պարտավոր է Ապահովագրողին տեղեկացնել այդպիսի անձանց առկայության և այդպիսի անձանցից գանձման ենթակա հատուցման գումարների մասին:

8.15. Պայմանագրի գծով բոլոր ապահովագրական պատահարների համար ապահովագրական հատուցումների ընդհանուր գումարը չի կարող գերազանցել ապահովագրական գումարի չափը:

8.16. Եթե Ապահովադիրին (Շահառուին) և Ապահովագրողին ապահովագրական պատահար տեղի ունենալուց հետո չի հաջողվել համաձայնության գալ ապահովագրական հատուցման չափի վերաբերյալ, ինչպես նաև իրական կորստի (վնասի) չափը որոշելու համար կողմերից մեկի պահանջով կարող է նշանակվել փորձաքննություն՝ շահագրգիռ կողմի հաշվին: Ապահովադիրի (Շահառուի) կողմից փորձաքննության արդյունքների հետ չհամաձայնվելու դեպքում ապահովագրական հատուցման չափը կարող է որոշվել դատարանի որոշմամբ:

8.17. Եթե մեղավոր կողմը վնասը փոխհատուցել է մասնակիորեն և ապահովագրական հատուցման հասանելի գումարից քիչ չափով, ապա Ապահովագրողն Ապահովադիրին (Շահառուին) կատարում է ապահովագրական հատուցում մեղավոր կողմից չփոխհատուցված մասին համապատասխան չափով, սակայն՝ ապահովագրական գումարի սահմաններում:

8.18. Ապահովագրական հատուցման ամսաթիվ է համարվում Ապահովագրողի դրամարկից կատարված վճարման օրը կամ Ապահովագրողի հաշվարկային հաշվից ապահովագրական հատուցման գումարի դուրսգրման օրը:

8.19. Ապահովադիրի և/կամ Պատասխանատու անձի դիտավորյալ գործողությունների հետևանքով ապահովագրական պատահարների առաջ գալու դեպքում Ապահովագրողը ապահովագրական հատուցում վճարելուց հետո ձեռք է բերում ետադարձ պահանջի իրավունք նման դիտավորությունը իրականացրած անձի նկատմամբ վճարված գումարի սահմաններում:

**ՄԱՔՍԱՅԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԶԻ (ԲՐՈՔԵՐԻ) ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ
ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ**

8.20. Ոչ պայմանական չհատուցվող գումարի (ապահովագրական գումարի նկատմամբ տոկոսներով կամ բացարձակ արտահայտությամբ) կիրառման պայմանով Պայմանագիր կնքելիս, ապահովագրական հատուցման չափը հաշվարկվում է վնասի իրական չափից չհատուցվող գումարի չափը նվազեցնելով («համամասնական» հատուցման պայմանով կնքված Պայմանագրի դեպքում չհատուցվող գումարը նվազեցվում է ապահովագրական գումարի և իրական (ապահովագրական) արժեքի հարաբերությանը համամասնորեն հաշվարկված վնասի իրական չափից):

8.21. Պայմանական չհատուցվող գումարի (ապահովագրական գումարի նկատմամբ տոկոսներով կամ բացարձակ արտահայտությամբ) կիրառման պայմանով Պայմանագիր կնքելիս.

8.21.1. վնասը փոխհատուցվում է ամբողջությամբ, եթե այն գերազանցում է չհատուցվող գումարի չափը,

8.21.2. չհատուցվող գումարի չափը չգերազանցող վնասը չի փոխհատուցվում:

8.22. Ապահովագրիչը պարտավոր է Կանոններով սահմանված փաստաթղթերը ներկայացնել պատահարի վերաբերյալ Ապահովագրողին գրավոր դիմում ներկայացնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

Այդ ժամկետում Ապահովագրի (Շահառուի) կողմից Կանոններով սահմանված փաստաթղթերը չներկայացնելու կամ գրավոր որևէ միջնորդություն սահմանված երկու ամսյա ժամկետը երկարաձգելու մասին չներկայացնելու դեպքում, Ապահովագրողը Կանոնների համաձայն Ապահովագրի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով մերժում է ապահովագրական հատուցման վճարումը, սույն կետում սահմանված ժամկետը լրանալուց հետո հնգօրյա ժամկետում:

Այն դեպքում, երբ Ապահովագրիչը գրավոր միջնորդություն է ներկայացնում փաստաթղթերի ներկայացման խոչընդոտների կամ այլ պատճառաբանությամբ սահմանված ժամկետը երկարացնելու մասին, ապա Ապահովագրողը ելնելով տվյալ գործի հանգամանքներից կարող է այդ ժամկետը երկարաձգել մինչև վեց ամիս ժամկետով: Նշված ժամկետում Ապահովագրի կողմից սահմանված պարտավորության չկատարման հետևանքները նույնանում են սույն կետի երկրորդ պարբերությունում սահմանված դրույթների հետ:

8.23. Ապահովագրողն ապահովագրական պատահարի մասին Կանոններում նշված բոլոր անհրաժեշտ փաստաթղթերն ստանալուն հաջորդող օրվանից հաշվված 5 օրյա ժամկետում պարտավոր է օրենքի և այլ իրավական ակտերի համաձայն ընդունել ապահովագրական հատուցումը վճարելու կամ մերժելու մասին եզրակացություն (որոշում):

Եթե Ապահովագրի կողմից ներկայացված փաստաթղթերը բավարար չեն տեղի ունեցած պատահարի պատճառները կամ վնասի չափը հիմնավորելու համար, ապա սույն կետի առաջին մասում նշված ժամկետները սկսում են հոսել վնասի պատճառների և(կամ) չափի հիմնավորման վերաբերյալ փաստաթղթերն Ապահովագրողի կողմից ձեռք բերման հաջորդ օրվանից:

Ապահովագրողն ապահովագրական հատուցումը վճարելու մասին որոշումը պատշաճ կերպով՝ Ապահովագրի (երրորդ անձին) անձամբ հանձնելու միջոցով կամ Ապահովագրի (երրորդ անձին) հասցեով փոստային առաքմամբ, տրամադրում է Ապահովագրի (երրորդ անձին):

Ապահովագրական հատուցման նվազեցման կամ հատուցման մերժման դեպքում Ապահովագրողի կայացրած պատճառաբանված որոշումը հնգօրյա ժամկետում պատվիրված

ՄԱՔՍԱՅԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԶԻ (ԲՐՈՔԵՐԻ) ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

Նամակով առաքվում է Ապահովադրին (Երրորդ անձին)՝ նրա մշտական բնակության կամ գտնվելու հասցեով:

Հատուցում իրականացնելու մասին որոշում կայացնելու օրվանից առավելագույնը 15 աշխատանքային օրվա ընթացքում Ապահովագրողը պարտավորվում է միանվագ իրականացնել ապահովագրական հատուցումը, եթե Ապահովագրողը և Ապահովադիրը ապահովագրական հատուցման վճարման այլ կարգ կամ ժամկետ չեն համաձայնեցրել:

Եթե Կանոններով սահմանված ապահովագրական դիսկի առնչությամբ իրավասու պետական մարմինների կողմից հարուցված է քրեական գործ, ապա Ապահովագրողը ապահովագրական հատուցում վճարելու կամ այն մերժելու մասին Կանոններով և այլ իրավական ակտերով նախատեսված եզրակացությունն Ապահովադրին (Երրորդ անձին) իրավունք ունի տրամադրել միայն քրեական գործի ավարտի կամ կասեցման վերաբերյալ Ապահովադրից (Երրորդ անձից) համապատասխան փաստաթղթերն ստանալու օրվանից հնգօրյա ժամկետում:

ԲԱԺԻՆ 9. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ ՄԱԺՈՐ)

9.1. Կողմերից ոչ մեկը պատասխանատվություն չի կրում Պայմանագրից բխող պարտականություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար, եթե դա հանդիսացել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանք, մասնավորապես՝ ռազմական գործողությունների, քաղաքացիական պատերազմի, ցանկացած տիպի ժողովրդական հուզումների, գործադուլների, տնտեսական շրջափակման, ինչպես նաև կառավարության կողմից սահմանված այլ սահմանափակումների և արգելքների:

9.2. Այն դեպքում, երբ 9.1 կետում նշված հանգամանքներից մեկն անմիջականորեն ազդել է պարտականությունը Պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու վրա, դրա կատարումը հետաձգվում է այդ հանգամանքների ազդեցության ժամկետով: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 30 (երեսուն) օրից ավելի, կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի ամբողջությամբ կամ մասնակիորեն լուծել Պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին, և այդ դեպքում կողմերից ոչ մեկը պատասխանատվություն չի կրում հնարավոր վնասների փոխհատուցման համար:

9.3. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը Պայմանագրից բխող պարտականությունների կատարման վրա պարտավոր է ապացուցել այն կողմը, որի պարտականությունների կատարմանը խոչընդոտում է նման ազդեցությունը:

ԲԱԺԻՆ 10. ՎՆԱՍԻ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՀԱՆՋԻ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԱՆՑՈՒՄ ԱՊԱՀՈՎԱԴՐԻՑ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԻՆ (ՍՈՒԲՐՈԳԱՑԻԱ)

10.1. Ապահովագրական պատահարի տեղի ունենալու արդյունքում Ապահովադրին պատճառված վնասից բխող նրա (կամ շահառուի) պահանջի իրավունքը վնասը պատճառած անձի նկատմամբ անցնում է ապահովագրողին՝ նրա կողմից հատուցված գումարի մասով: Դիտավորյալ վնաս պատճառած անձի նկատմամբ պահանջի իրավունքն ապահովագրողին անցնելը բացառող պայմանագրի պայմանն առոչինչ է:

10.2. Ապահովագրողն իրեն անցած պահանջի իրավունքն իրականացնում է Ապահովադրի (շահառուի) և վնասների համար պատասխանատու անձի միջև հարաբերությունները կարգավորող կանոնների պահպանմամբ:

10.3. Ապահովադիրը (շահառուն) պարտավոր է Ապահովագրողին հանձնել իր պահանջի իրավունքը հավաստող փաստաթղթերն ու այլ ապացույցներ՝ հայտնելով

**ՄԱՔՍԱՅԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԻ (ԲՐՈՔԵՐԻ) ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ
ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ**

ապահովագրողի կողմից իրեն փոխանցված պահանջի իրավունքն իրականացնելու համար բոլոր անհրաժեշտ տեղեկությունները:

10.4. Եթե ապահովագրողը (շահառուն) հրաժարվել է ապահովագրողի կողմից հատուցված վնասների համար պատասխանատու անձի նկատմամբ պահանջի իրավունքից, կամ այդ իրավունքն իրականացնելն անհնարին է դարձել ապահովագրողի (շահառուի) մեղքով, ապա Ապահովագրողը լրիվ կամ համապատասխան մասով ազատվում է ապահովագրական հատուցում վճարելուց և իրավունք ունի պահանջելու վերադարձնել ավելորդ վճարված հատուցման գումարը:

ԲԱԺԻՆ 11. ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ

11.1. «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան Ապահովագրողը (Շահառուի) Ապահովագրողին տալիս է իր համաձայնությունը մշակելու ներկայացված փաստաթղթերում և տեղեկություններում պարունակվող իր անձնական տվյալները՝ Ապահովագրողի հետ կնքված ապահովագրական պայմանագրի կատարումն ապահովելու, դրանից բխող իր իրավունքներն իրականացնելու, Ապահովագրողի հետ իրավական փոխհարաբերություններն երկարաձգելու, Ապահովագրողի այլ ապահովագրական ապրանքների և ծառայությունների մասին տեղեկացնելու նպատակներով: Ապահովագրողը համաձայն է, որ Ապահովագրողը տրամադրի Շահառուին՝ ապահովագրության պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման ընթացքի մասին տեղեկություններ, այդ թվում՝ ապահովագրավճարների չափի և վճարման փաստի, ապահովագրական գումարի մեծության, ապահովագրական պատահարի առաջացման փաստի կամ հավանականության, պահանջների առաջացման և մարման, ապահովագրական հատուցման վճարման մասին, ինչպես նաև ապահովագրական պայմանագրի հետ կապված այլ տեղեկություններ: Վերոհիշյալ նպատակներին հասնելու համար Ապահովագրողն իրավունք ունի փոխանցել ապահովագրական պայմանագրի կնքման և կատարման հետ կապված իրեն հայտնի դարձած անձնական տվյալները երրորդ անձանց (այդ թվում՝ փոխանցել դրանք վերաապահովագրողներին՝ վերաապահովագրության պայմանագրեր կնքելու և կատարելու նպատակով), որոնց հետ Ապահովագրողը ունի համապատասխան պայմանագրեր, որոնք ապահովում են անձնական տվյալների անվտանգ պահպանումը և անօրինական բացահայտումից (գաղտնազերծումից) պաշտպանությունը:

11.2. Սույն Կանոնների իմաստով անձնական տվյալները ներառում են, մասնավորապես՝ Ապահովագրողի (Շահառուի) անունը, ազգանունը, հայրանունը, անձը հաստատող փաստաթղթի տվյալները, սոցիալական քարտի/հանրային ծառայության համարանիշը կամ դրանք չունենալու մասին տեղեկանքի տվյալները, հասցեն, հեռախոսահամարը, ինչպես նաև անձնական կենսաչափական և հատուկ տվյալները (այդ թվում՝ առողջական վիճակի, ռասայական և(կամ) ազգային պատկանելության, արհեստակցական միությանն անդամակցման, սեռական կյանքին վերաբերող տեղեկությունները, լուսանկարը, ծայնագրությունը և այլն) և/կամ այլ տեղեկատվություն, որը հնարավորություն է տալիս ուղղակի կամ անուղղակի կերպով նույնականացնել Ապահովագրողի (Շահառուի) ինքնությունը: Անձնական տվյալներ մշակելը նշանակում է ցանկացած գործողություն (գործառնություն) կամ գործողությունների (գործառնությունների) համախումբ, որը կատարվում է անձնական տվյալների հետ՝ ավտոմատացման գործիքների կիրառմամբ կամ առանց նման գործիքների, այդ թվում՝ տվյալներ հավաքագրելը, արձանագրելը, ձայնագրելը, համակարգելը, կուտակելը, դասակարգելը, պահպանելը, ճշգրտելը (թարմացնելը, փոփոխելը), վերհանելը, արտաբերելը, օգտագործելը,

**ՄԱՔՍԱՅԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԻ (ԲՐՈՔԵՐԻ) ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ
ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ**

բացահայտելը (տարածելը, այլ անձին հաղորդելը, տվյալներին հասանելիություն տրամադրելը), ապանձնավորելը, արգելափակելը, ջնջելը, ոչնչացնելը, անդրսահմանային փոխանցումը, ինչպես նաև ցանկացած այլ գործողություն, որն անձնական տվյալների հետ իրականացվում է գործող օրենսդրությանը համապատասխան:

11.3. Կետ 11.1-ում նշված Ապահովագրի (Շահառուի) համաձայնությունն ուժի մեջ է մնում Ապահովագրության պայմանագրի գործողության ամբողջ ժամանակահատվածում, ինչպես նաև պայմանագրի ժամկետն ավարտելուց կամ պայմանագրի շուրջ կողմերի վեճի վերաբերյալ դատական որոշումն ուժի մեջ մտնելուց հետո ևս 5 տարիների ընթացքում: Սույն համաձայնությունը կարող է հետ կանչվել Ապահովագրի (Շահառուի) կողմից՝ առնվազն 30 օրացուցային օր առաջ ուղարկելով համապատասխան գրավոր դիմում Ապահովագրողին:

11.4. Ապահովագրից (Շահառուից) իր անձնական տվյալների մշակման մասին համաձայնությունը ետ կանչելու, կամ անձնական տվյալներն ուղղելու կամ ոչնչացնելու (եթե անձնական տվյալներն ամբողջական կամ ճշգրիտ չեն, կամ հնացած են, կամ ձեռք են բերվել ապօրինի ճանապարհով, կամ անհրաժեշտ չեն մշակելու նպատակների համար) պահանջ ստանալու դեպքում, Ապահովագրողը պարտավորվում է դադարեցնել այդ անձնական տվյալների մշակման գործողությունները, կամ ուղղել կամ ոչնչացնել անձնական տվյալները 10 աշխատանքային օրվա ընթացքում, եթե բացակայում են Ապահովագրողի և Ապահովագրի (Շահառուի) միջև չկատարված պարտավորություններ և գործող պայմանագրային հարաբերություններ, այլապես՝ Ապահովագրողի և Ապահովագրի (Շահառուի) միջև պայմանագրային հարաբերություններն ենթակա են դադարեցման՝ դրանից բխող բոլոր բացասական հետևանքներով: Անձնական տվյալների մշակման մասին համաձայնության հետ կանչման կամ անձնական տվյալների ոչնչացում պահանջելու դեպքում՝ Ապահովագրի (Շահառուի) անձնական տվյալները դադարում են մշակվել Ապահովագրողի կողմից, սակայն դրանք պահպանվում են տեղեկատվական արխիվում և կարող են օգտագործվել միայն օրենսդրությամբ նախատեսված դեպքերում: Համաձայնության հետ կանչը հետադարձ ուժ չունի:

11.5. Սույն Կանոնների հիման վրա Ապահովագրական պայմանագիր կնքելով, Ապահովագիրը (Շահառուն) հավաստում է, որ տեղեկացված է՝ 11.1 կետում նշված իր համաձայնությունը ցանկացած պահին հետ կանչելու, իր անձնական տվյալները օգտագործող օպերատորների վերաբերյալ տեղեկատվություն ստանալու, իր անձնական տվյալները ճշգրտում պահանջելու և «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքով սահմանված իր այլ իրավունքների մասին: Ապահովագիրը (Շահառուն) նաև հաստատում է, որ Ապահովագրողն իրեն տրամադրել է վերջինիս անվան և հասցեի, անձնական տվյալների մշակման նպատակների, ժամկետների, իրավական հիմքերի, անձնական տվյալների նպատակային օգտատերերի մասին և «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքով սահմանված այլ տեղեկատվությունը:

ԲԱԺԻՆ 12. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳ

12.1. Կանոնների համաձայն կնքված Պայմանագրից բխող վեճերը կարգավորվում են բանակցությունների միջոցով:

12.2. Բանակցությունների արդյունքում համաձայնության չգալու դեպքում վեճերը լուծվում են Ֆինանսական համակարգի հաշտարարի կողմից՝ «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքի համաձայն կամ դատական կարգով՝ ՀՀ օրենսդրության համաձայն:

**ՄԱՔՍԱՅԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԻ (ԲՐՈՔԵՐԻ) ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ
ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ**

12.3. Վիճելի հարցեր լուծելու դեպքում Պայմանագրի դրույթները գերակայող ուժ ունեն
Կանոնների նկատմամբ: